



**«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ/ԳԷՖ/00074869 ծրագիր**

**ՄԱԶԾ ծրագրային ոլորտը՝**

Էներգետիկա և շրջակա միջավայր

**Ծրագրի համարը՝**

ՄԱԶԾ-ԳԷՖ/00074869

*Ծրագրի փաստաթուղթը ստորագրված է ՀՀ Կառավարության և ՄԱԶԾ-ի կողմից*

**PIMS համարը՝** 4669

**Ազգային իրագործող՝**

ՀՀ բնապահպանության նախարարություն

**Ֆինանսավորող՝**

Գլոբալ էկոլոգիական ֆոնդ

**Իրականացնող**

**կազմակերպություն՝**

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

**Ծրագրի բյուջե՝**

ԳԷՖ՝ 1,600,000 ԱՄՆ դոլար

**Տևողությունը՝**

2014-2017թթ.

**Կոնտակտային անձ՝**

ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի պատասխանատու՝ Արմեն Մարտիրոսյան  
[armen.martirosyan@undp.org](mailto:armen.martirosyan@undp.org)

**Ծրագրի գրասենյակ՝**

Կառավարական 3-րդ շենք, 533 սենյակ, Երևան, ՀՀ 0010 Հեռ.՝ (37410) 583 920, 583 932 Ֆաքս՝ (37410) 583 933  
[www.nature-ic.am](http://www.nature-ic.am)



**Նախապատմությունը**

Ծրագրի հիմնական թիրախը քաղաքային լուսավորության սեկտորն է, որը ներառում է քաղաքապետարանների կողմից կառավարվող և վճարվող լուսավորության սարքավորումներ, ինչպիսիք են հանրային տարածքների և քաղաքային շինությունների լուսավորումը, քաղաքապետարանների սեփականություն հանդիսացող և քաղաքապետարանների կողմից շահագործվող շենքերը և շինությունները, օրինակ, բազմաբնակարան շենքերի բակերը: Լուսավորությունը, ջեռուցումից հետո, քաղաքային ԶԳ արտանետումների երկրորդ ամենամեծ աղբյուրն է, որին բաժին է ընկնում արտանետումների մոտ 1/3-ը և էլեկտրաէներգիայի վճարների 50%-ը: Հայաստանի քաղաքապետարանների քաղաքային լուսավորության ծախսերը (էլեկտրաէներգիայի և պահպանության ծախսերը) կազմում են տարեկան ավելի քան 5 մլն ԱՄՆ դոլար: Մայրաքաղաք Երևանը լուսավորության սեկտորում ունի էներգասպառման և խնայողության ամենամեծ ներուժը. այն սպառում է երկրի քաղաքային լուսավորության ողջ էներգիայի 90%-ը, մոտավորապես 56,000 ՄՎտժ/տարի:

**Ծրագրի նպատակը**

Սույն ծրագրի գլխավոր նպատակն է քաղաքային ներդրումային ծրագրերի և ազգային քաղաքականությունների իրականացման ճանապարհով Հայաստանի քաղաքներում քաղաքային լուսավորության էներգաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան և կրճատել ջերմոցային գազերի արտանետումը: Առաջարկվող ծրագիրը համապատասխանում է ազգային գերակայություններին, ռեսուրսներ խնայող և կլիմային հարմարվող տնտեսական աճի խրախուսման միջոցով հզորացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական և էներգետիկական անկախությունը:

**Հիմնական բաղադրիչները**

Նախանշված արդյունքներին հասնելու և ՀՀ քաղաքներում վերացնել էներգաարդյունավետ կանաչ լուսավորության խոչընդոտները վերացնելու նպատակով աշխատանքը կազմակերպվում է չորս փոխկապակցված բաղադրիչներով.

1. Քաղաքային կանաչ լուսավորության գիտելիքներ և կարողություններ
2. Քաղաքային կանաչ լուսավորության փորձնական ծրագրեր
3. Քաղաքային էներգաարդյունավետ լուսավորության ծրագրերի համաչափ ընդլայնման ֆինանսական և ինստիտուցիոնալ մեխանիզմները
4. Էներգաարդյունավետ լուսավորության ազգային քաղաքականություններ, նորմեր և ստանդարտներ

**Կանխատեսվող արդյունքը**

Ծրագրի շրջանակներում իրականացվելիք ցուցադրական նախագծերից ակնկալվող ուղղակի գլոբալ բնապահպանական օգուտը ներառում է ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը տարեկան 200 տCO<sub>2</sub> չափով կամ 3,000 տCO<sub>2</sub> չափով էներգաարդյունավետ լուսավորության տեխնոլոգիայի կիրառման ամբողջ ընթացում:

Հաշվարկային նաուդղակի կուտակային արդյունքը շուկայի վերափոխման ուղղված միջոցառումներից ներառում է էներգախնայողության ներուժի 40% իրականացումը փողոցային լուսավորության դեպքում և 50% - ներշենքային հանրային լուսավորության դեպքում:

**Շահառուները**

ՀՀ կառավարությունը, գիտահետազոտական և կրթական հաստատություններ, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ, մասնավոր հատված և ՁԼՄ-ներ: